

Սմբատ Բիւրատ
 Կմբագրութիւն «Փիիհնիկ», Ի
 Աղեփանգրիա



S. Burat
 Rédaction «PUNIG»,
 Alexandrie

ԵԳԻՊՏՈՍ

ԱՐՏԱՍԱՅՍԱՆ

Չր. 45
 ՏԱՐԵԿԱՆ... 45
 ՎԵՑԱՄՍԵԱՑ 25

Ֆր. 15
 ՏԱՐԵԿԱՆ... 15
 ՎԵՑԱՄՍԵԱՑ 8

ՓԻԻԿՆԻԿ

ԲԱԺՆԵԳԻՆԸ
 ԿԱՆԽԻԿ Է
 Ձեռագիր ետ չ'դարձուի

ԿՈՎԿԱՍ
 ՏԱՐԵԿԱՆ Բպլ. 6
 Ազդեր կ'ընդունուին մասնաւոր պայմաններով.

Կը ծախուի ՄԷԿ գրուս օղջի

ՇԱԲԱՐԱԹԵՐԹ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գ. ՏԱՐԻ

28 ՓԵՏՐՈՒԱՐ 1903

ԹԻԻ 28

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

ՖՐԱՆՍՍՅԻ ՄԷՉ

Սպասուած հաւաքոյթը տեղի ունեցաւ վերջապէս ամսոյս 15ին կիրա. կի օրը: Ֆիկսմ.ՐՕի 16 Փետր.ի թիւը դադարաւ մը կուտայ այդ հայասիրական Յոյցին վրայ, «Հայերուն համար» յօդուածովը, որուն աւելորդ չ'ենք համարիր թարգմանութիւնը դնել հոս.

ՀԱՅԵՐՈՒՆ ՀԱՄԱՐ

Քաղաքական անբուժելի հակառակորդներ, Պ. Պ. տ'էդուրնէլ տը Գօնսդան, Ժօրէս, Տընի-Գօշէն, տը Բրէսանսէ, Բօլ Լըռօլ, Երեսփոխաններ, Կաճառէն Պ. Անագօլ Լըռուա-Պօլիէօի աշակցութեամբ, մարդկային հասարակաց մտածումի մը մէջ միացած, երէկ իրենց քաղաքակիցները կը գումարէին Շաղօ-Տ'Օի թատրոնը, բողոքելու համար հալածանքներուն

դէմ, որոնց զոհ են Հայերը: Նախագահը Պ. տ'էդուրնէլ տը Գօնսդան՝ փայլուն պերճախօսութեամբ մը կը բացատրէ շարժառիթները Հայաստանի ու Մակեդոնիոյ բնակիչներուն ի նպաստ այս հաւաքոյթին:

«Մաքկուրիւնը, կ'ըսէ, մէկ խօսքով, պէտք չէ անգգայ վկայ մ'ըլլայ ասանկ սեսարանի մը, այո՛, պէտք չէ որ ըլլայ, նոյն իսկ ի պաշիւ ֆաղափախութեան: Եթէ կարելի է լուծել Արեւելեան Հարցը, ճիշդ այն վայրկեանի է ուր Մակեդոնիան կը յուզուի:

Արդ, այս խնդիրը բնաւ անլուծելի չէ: Կլասսիօն ի՛նք կը յայտարարէ — ու ասիկայ իր կեանքին պաշիւն եղաւ — թէ կարելի չէր մէկտեղ ապրեցրնել ֆաղափախութիւնն ու բարոսութիւնը: Կ'եզակացրնէր թէ՛ Հայասանը պաշտպանել՝ ծառայել էր Եւրոպային: Եւրոպային միջամտութիւնը հարկաւոր է. պէտք է ան՝ կասարուիլը պահանջէ խոսացուած բարեփոխութիւններուն: Դիւանագիտական նախաձեռնութեանց զարկ ու մղում սալու նուազակա՛վ առաջ բերին մենք այս

տարժումը: Ֆրանսական հանրային կարծիքը մեզի հետ է, ինչպէս որ հետն է ամեն ազնիւ դատերու: Մենք պիտի յաղթենք:»

Պ. տէրուրնէլ տը Գոնսպան, որուն խօսքերը միաձայնութեամբ ծափահարուեցան, խօսքը շատով կուտայ

Պ. Տրնի Գոչէնի, որ հիանալիօրէն կը պատկերէ կացութիւնը Հայերուն, զինուած հրոսախումբերու կատաղութեանը մատնուած՝ առանց պաշտպանի: ԺԺ. Գարուն մէջի Բարբարոսները, ձինկիզ-Խան ու Թիմուրէնկ, արձակ համարձակ քաղաքները կը պտրտին, աւերակներ ցանելով իրենց անցած տեղերը: Կը յիշեցընէ 1895 և 1896ի դէպքերը, Տիկին Գարլիյէի հերոսութիւնը, ա՛յնքան պատուաւոր ու ա՛յնքան արիասիրտ միջամտութիւնը Փուատ-Բաշային, որ անհետացաւ ա՛յնքան խորհրդաւոր կերպով ո՛վ գիտէ ո՛ր աքսորովայնի մէջ:

Յրչելով Եւրոպային տկարութիւնները, կը հարցընէ ինքնիրեն թէ՛ նոր զրահաւորները, այս պողպատէ հրէշները որ պիտի կրեն «Արդարութիւն, Ազատութիւն, Անկախութիւն» անունները և էննէսդ Արևան աւելի թելագրական անունը, լոկ մասնաւոր շահերը պիտի պաշտպանեն փոխանակ մարդկային մեծ դատին շահերուն:

Պ. Տրնի Գոչէն կ'աւարտէ իր ճառը, պահանջելով Մակեդոնիոյ ինքնավարութիւնը՝ Եւրոպային հոկոզութեանը սակ:

Խանդավառ ծափեր կ'ողջունեն իր վերջաբանը:

Պ. տը Բրէսանսէի գտած յաջողութիւնը՝ ո՛չ նուազ փայլուն եղաւ քան իր նախորդ ատենաբաններունը: Ռօնի երեսփոխանը՝ արտաքին քաղաքականութեան զարմանալի դասընթացք մը կուտայ: Ամբողջ պատմութիւնն է Արևելեան Հարցին, ա՛յնքան կնճռոտ, ա՛յնքան փափուկ ու ա՛յնքան

քան վտանգալից, որ կը պարզուի ուշագիտ միաքերուն առջև:

Ահա հրաշալի բան է տեսնել թէ ի՛նչ համակրալիք հետաքրքրութեամբ, այդ ժողովրդային ունկնդիր բաղձութիւնը մտիկ կ'ընէ իրեն համար նոր այս բաները:

«Պէտք է, կըսէ Պ. տը Բրէսանսէ, յարգել տալ դաւենագիրները: Մենք իրաւունք ունինք յառաջիկայ գարնան համար Մակեդոնիոյ մէջ վախով սպասելու սարսափելի ապստամբութիւն մը:

Եւրոպան պարտի առաջն առնել այս հրդեհին ու պահանջել որ հսկողութիւն մի գործ դուրի Իրան կառավարութեանը վրայ, եւրոպական միաշունջ Յանձնաժողովի մը կողմէն: Ֆրանսան կրնայ գործել օգտակարապէս ու իր արտաքին գործերու հախորարը հաստատուէ անկախ: Աւելի՛ն պիտի ընէ անի, ու Եւրոպան, վստահ եմ, պիտի հետեւի անոր:»

Պ. Ժօրէս բեմը կ'ելլէ Պ. սը Բրէսանսէյի յայտնողելով. հախորդ ատենաբաններուն եզրակացութեանց կը ձայնակցի. ու պերնախօսութեան գեղեցիկ սլացքի մը մէջ, դիւանագիտութիւնը կը յորդորէ ալ ձգել հոսած փսած աւանդութիւնները, ու, ինչպէս որ Պ. Տէլգատ Ինի ալ կը խնդրէ, «չը թողուլ որ անցնի ժամը»:

Պ. Պ. Լըռօլ ու Լըռօլ-Պօլիէօ նոյնպէս, շքեղօրէն ձեռք առին Հայերուն պաշտպանութիւնը:

Այս հաւաքով Վերջացաւ քուէարկութեամբ օրակարգի մը, որ կը պարունակէ բողոքարկուններուն բոլոր պահանջումները:

Ահա՛ բնագիրը.

«Ամեն կարծիքներէ ՉՈՐՄ ՀԱՉԱՐ Ֆրանսական քաղաքացիները, 1903 Փետր. 15 ին համախմբուած, Բարիզ, Շադօ-s'0 քաւտնը.

Նկատելով դժնէ կացութիւնը Հայաստանի ու Մակեդոնիոյ բնակ-

չութեանց ու յարանուն ծանրութիւնը դէպքերուն.

Նկատելով թէ այս կացութիւնը՝ արհամարհանքի կոչ մ'է հանրային խղճմքսանքին ու վսանգ մը՝ ընդհանուր խաղաղութեան համար.

Նկատելով թէ, միմիայն, Պերլինի Դաւեազրին գործադրութիւնը թէ՛ Հայաստանի մէջ եւ թէ՛ Մակեդոնիոյ, կեցայ վերջ մը դնել իրերու այս անցերելի վիճակին.

Նկատելով usիպիչ պարսականութիւնը գոր Պերլինի Դաւեազիրը կը դնէ բոլոր կնկողներուն վրայ.

Բաղձանք կը յայտնէ որ Յրանսական կառավարութիւնը գործէ ազդուօրէն՝ ձեռք բերելու համար վերջապէս Պերլինի 23 եւ 61 յօդուածներուն գործադրութիւնը, համաձայն 1895 Մայիս 11ի Յիւստակագրին, ու դադրեցրնել սալու համար չափէն աւելի երկար տեղ շարքի՝ Թուրքիոյ մէջ մարդկութեան դէմ գործուած ոնիրներուն, առանց խտրութեան ազգի կամ կրօնի:

Այս օրակարգը քուէարկուեցաւ միաձայնութեամբ ներկաներուն, որոնք կը բաղկանային բոլոր քաղաքական կուսակցութեանց պատկանող քաղաքացիներէ:

Ասիկայ ապացոյց մ'է թէ քիչ մը բարի կամքով ու քիչ մ'ալ ինք իր վրայ իշխելու ուժով կարելի պիտի ըլլայ, ուրիշ պարագաներու մէջ, միեւնոյն հանգարտութեամբ մտիկ ընել մարդիկ, որոնց կարծիքները չ'են համապատասխաներ մեծամասնութեանը կարծիքին: ՕԿԻՒՍ ԱՎՐԻՒՆ

Հայաստաններուն այս Յոյցը տեսնենք ինչ արդիւնք պիտի բերէ, մե՛րն ալ Մակեդոնական հարցին հետ միեւնոյն ժամանակ լուծել տալու տեսա-

կէտով: Սակայն, առանց յուշտես մը ըլլալու, Մակեդոնիոյ համար ալ գործուար է բան մը յուսալ. հոգ չէ՛ թէ այս շարժումն հեռագիրները ծանուցած ըլլան թէ՛ Սուլթանը ընդունեց բարենորոգումներու Աւստրո - Ռուսական ծրագիրը. թէ՛ Պուլկարիան մէկիկ մէկիկ ձերբակալած է Մակեդոնական Գոմիթէներուն պետերն ու բոլոր ազգեցիկ գործիչները. թէ՛ Մակեդոնական «Ներքին կազմակերպութիւն» անուն գաղտնի յեղափոխական Միութիւնը — որ Մակեդոնիոյ մէջ կը գործէ — դեռ ժամը պատեհ չը նկատեր ընդհանուր ապստամբութեան, ևն, ևն:

Ապտ-իւլ-Համիտ առատ՝ իր խոստումներովն ու ժլատ՝ գործադրութեանը համար, ամեն մարդէ աւելի ինք գիտէ թէ ինչ կ'արժեն իր խօսքերը: Մակեդոնիոյ բարենորոգումներուն Աւստրո - Ռուսական ծրագիրը թիւ շ ընդունած ըլլայ. ե՛րբ պիտի գործադրուի, ինչպէս և որի՞ ձեռքով պիտի գործադրուի: Ահա մտածել տրուող հարցումներ:


Մենք չը կարծենք թէ Մակեդոնական խնդիրն ալ կը կարգադրուի, ու մերը կը մնայ դարձեալ երեսի վրայ:

Մարտը կուգայ. օգետուն պէս քաղաքականութիւնն ալ կը փոփոխուի վայրկենէ վայրկեան:

Սուլթանը մեր Հայաստանի վեց նահանգներուն բարենորոգման իրասեկն հանեց, քանի մ'օր յետոյ, բարենորոգումներն սկսաւ գործադրել իր ըմբռնած կերպով: Համբաւաւոր իրաւեիին յաջորդեցին անմոռանալի Զարդերը:

Վաղուան օրը տեսնենք ինչ անակնկալներ պահած է:

Սպասե՛նք:



ՁԵՐՈՒՆԻ ԷԱՄԱՐ

Նախընթացով հայրենիքին «Երկու Վերջեր»ը պարզեցինք. ծաղկախտին աւերներն ու պատերազմին որբերը, ու իբր անմիջական ճար ու դարման՝ կոչում ըրինք Եգիպտոսի ու Արտասահմանի բովանդակ հայութեան, կազմելու նպատակով ընկերութիւն մը, Միութիւն մը, որուն միակ ու մերձաւորապէս գործադրելի նպատակն ըլլայ.

1. Վստահելի բժիշկի մը ձեռքով պատուաստել տալ մանկիկները.
2. Պատասխարել, ապրեցընել ու դատարակել 500 որբերը:

Կուգանք այսօր անկեղծ ու ճշմարիտ ուրախութեամբ աւետել թէ՛ մեր կոչը՝ հզօր արձագանգ գտած է հոս, Եգիպտոսի մայրաքաղաքին մէջ:

Եգիպտոսի Ազգ. Առաջնորդարանին գիւտնապետը Տիար Նազարէթ Աղազարմեան, որ արդէն Գահիրէի Որբախնամ Ընկերութեանց մէջ իր օգտակար գործունէութիւնը գրած է միշտ, կարգալով Փիլինիկի Թիւ 27 ի «Երկու Վերջեր» հիմնադրուածը, իմանալով ծայրահեղութիւնը հոն տիրող թշուառութեան, և սեռնելով թէ՛ առ ի չգոյէ գեղի դարմանի՝ ամեն օրքանի մը տասնեակ երախաներ կը մահանան ծաղկախտէ, փութացեր է գիմել Շուպրա, ծանօթ բարեգործ Ազնուաշուք Տիար Պետրոս Կարապետեանի բնակարանը. պարզեր է կացութիւնն ու խնդրեր է որ նպատտ մը զրկէ ի Զեթուն:

Հոս կը դնենք նոյնութեամբ հետևեալ տողերը յարգելի Դիւանապետին նամակին.

«Շատ գոհ եղայ որ Ն. Ազնուութիւնը բարեհաճեցաւ անմիջապէս 25 անգլ. ոսկի սահմանել այս նպատակաւ եւ երեկուան բօսթով այս գումարը Պատրիարքարան զըրկուեցաւ Օսմ. Պանքայի չէքով մը: Իսկ այս բարեգործութեան միջնորդը երջանիկ պիտի համարի ինքզինքը եթէ Զեթունի

մէջ արցունք մը սրբուի եւ խեղճ երախաներէն մէկուն կեանքը վայրկեան մը երկարի:»

Այս տողերը բուական պերճախօս են, ի վեր հանելու համար նշանակութիւնը, որ տրուած է ի Գահիրէ, մեր կոչին:

Հրապարակային շնորհաւորութեան և շնորհակալութեան արժանի՝ վարձուէք Տիար Պետրոս Կարապետեանի, որ, առիթն է նշանակելու, առաջին անգամը չէ՛ որ կը հասնի հայրենիքի թշուառներուն արցունքը սրբելու:

Փիլինիկի Պատ. Ընթերցողները պէտք չէ մոռցած ըլլան 50 անգլ. ոսկիի գումարը, զոր Ազն. Տիար Պետրոս Կարապետեան զրկեց Զեթուն ու Վան, սովեալներուն ի նպատ, 1899ի Փիլինիկի մէջ երևցած «Սո՛վ կայ Սո՛վ» յօդուածին տպաւորութեանը տակ: Այս այն անձնաւորութիւնն է որ կը շարունակէ իր ծախքովը պաշտպանել ուր սրբեր կիպրոսի և ուրիշ Որբանոցներուն մէջ:

Ապրի՛ն Կարապետեանները, բազմապատկի՛ նմաններուն թիւը...

Ուրիշ մխիթարիչ լուր մ'ալ կազմուիլը նոր ընկերութեան մը, նպատակ ունենալով.

1. Անմիջապէս պատուաստել տալ Զեթունի մանկիկները, առաջն առնելու համար ծաղկախտին ծաւալմանը.
2. Զեթունի 500 որբերը պահպանել եւ դատարակել ու հոն ախրող թշուառութիւնն ամոքել:

Ու ասիկայ կ'ըլլայ Կախաձեռնութեամբը Գեր. Հայր. Բարթողիմէոս Վթագածեանի, Փռնուզի քաջարի վանահօր, որ արդէն հինգ տարիէ ի վեր հոս կը մնայ, յուսալով սպեղանի մ'իր թեմին վէրքերուն ու սպասելով օգնութիւն՝ իր քանդուած մենաստանին նորոգման: Ամսոյս 26ին Ս. Վարդանանց հինգչաբթին, Ս. Պօղոս Պետրոսի տաճարին տուջեւ, ամենէս սիրուած

արժանաւոր եկեղեցականը, կուխտէ հիմնել այս ընկերութիւնը, հետն ունենալով ՓիիՆիկի խմբագիրը, և քաղաքիս պարկեշտ արհեստաւորներէն Տիար Յարութիւն Մանուկեանը, նոյն օրը թուղթի մը վրայ կը գրուի կոչ մը, Աղեքսանդրիոյ հայերը կը հռաւիրուին անդամակցիլ այս ընկերութեան, ստորագրելով գումար մը, զոր պատրաստ ըլլան վճարել ամսէ ամիս:

Շրջաբերութիւնը կըսկսի, մինչեւ ցարդ անդամակցողներուն թիւը հասած է 60ի:


Վստահօրէն կրնանք աւետել թէ այս նորակազմ ընկերութիւնը քիչ ատենուան մէջ պիտի յառաջդիմէ ու մեծնայ, բաւական է որ Աղեքսանդրիոյ շարժումը ծաւալ գտնէ եղիպատի մայրաքաղաքին ու միւս հայաբնակ կեդրոններուն մէջ: Գեո. Հայր Բարթողիմէոս կը խորհի այցելել տուներն ալ, մայրերը, տիկիններն ու օրրորդները յորդորել անդամակցութեան ընկերութեան մը, որ պիտի սրբէ արցունքները որբերու սիրելագոյններուն ու պիտի ամօքէ թշուառութիւնը հայրենիքներու ամենացանկալին, Արծիւի բոյն Զեթունին:

Ու երբ, մօտ ժամանակի մէջ, լեցուի թուղթը ստորագրողներու անուններովը, պիտի հրապարակով հրաւէր կարգացուի անդամակցողներուն ու բոլոր ազգայիններուն, հաւաքոյթ մը սարքել, որոշուած տեղ մը, ընդհ. ժողովով ընտրել Դիւան ու Վարչութիւն:

Յաջորդ թիւով պիտի հրատարակենք մանրամասնութիւնները Փետր. 15ի Շաղո-s'Օի Հաւաքոյթին, քաղելով ԹԱՆԷՆ և ուրիշ մեծ թերթերէն:

ՎԵՂԱՐԱԽՈՐ ՀՍՍԱՌՈՒՆ

ԵՒ ԸՆԿ.



Բաղդաւոր ծնած է մեր վեղարաւոր հասառուն. եթէ բաղդ չունենար ինք, իր ըղբղին ահռելի պարապողն ու մօրուքին ոստախիտ թաւուտքովը, իր տգիտութեան անհասանելիօրէն խորհրդաւոր խորութեամբն ու իր արծաթսիրութեան անմրցելի մասնագիտութեամբը չէր համարուիր այսօր Միաբան Ս. Աթոռի մը, սրուն այնքան թանկագին կալուածները ծախեց այնքան ցած գինով, և որուն Լուսարարապետութիւնը կորզել երազեց վայրկեան մը, ձեռք դնել Գանձին վերայ, ուր անկորուստ եւ անվթար կը պահուին, դարերու փոյններէն զերծ, ամենաթանկագին աւանդներ ու սրբութիւններ:

Իրաւ բաղդաւոր ծնունդ մը մեր Հայր Վահրամը, որ թէև չը հասաւ իր տարիներէ ի վեր սնուցած բաղձանքին, այն է Լուսարարապետութեան բարձրագոյն ու տենչալիօրէն քաղցրագոյն պաշտօնին, աղատուեցաւ սակայն անողօք մամուլի մը դատաստանէն, դէթ առ այժմ, ցնոր տնօրինութիւն. ազատուեցաւ ինք և Ընկ. ը, որովհետև, այս շարժումն թղթաբերով հասած պոլսական թերթերը կը ծանուցանեն թէ՛ երուսաղէմի Ս. Աթոռի Միաբանութիւնը, — թէ և մէկէ աւելի կուսակցութեանց բաժնուած, լուսարարապետին ընտրութեան խնդրին մէջ, — յարմարագոյն ընտրելի նշանակած է Գեր. Գաբրիէլ Վարդապետ Անուշեանը, այժմ Տեսուչ Դամասկոսի: Ըսել է թէ, դէթ հիմակուան կամ, աւելի ճիշդը, մօտաւոր ապագայի մը համար, վտանգը բարձուած է, Պապ-Սիտրայի տանուտէր վեղարաւոր հասառուն:

լուսարարապետութեան ընտրելիութե-
նէն դուրս ձգուելովը:

Փակենք ուրեմն այս էջը, նորէն
չը բանալու մտադրութեամբ: Հոգ չէ՛,
թո՛ղ հանգչի Հայր Վահրամ, թո՛ղ
լայնքին երկայնքին վրայ տարածուի
նորակառոյց յարկերուն, թո՛ղ հանդարտ
ուտէ, խմէ, պառկի, քնանայ. պիտի
չը վրդովի քունը, պիտի չը խանգա-
րուի խաղաղութիւնը պարապ անօ-
գուտ իր կեանքին:

Ո՛վ հասառուղ վեղարաւոր, խըն-
դա՛ւ և ուրախացի՛ր, բարեկենդա՛ն կա-
տարէ՛, շքեղ սեղան սարքէ՛, բոլոր-
տիքդ հաւաքէ՛ ունայնութեանդ եր-
կըրպագունները, քու փողարներդ ու
խնկարկուններդ. ահա՛ կուգան, կը
չարուին, խնդումներես ու արբշխու,
պատկառելի Ոչինչիդ շուրջը պարաւոր:

ՍՐԲԱԳՐՈՒԹԻՒՆ

Ն. Վ. Ա. Բաշա Բարթողի տե-
ղիս Ա. զ. ք. ին սահմանած տարեկան նը-
պաստը 120 ոսկի է և ո՛չ 100:

ՔՐՈՆԻԿ

— Մակեդոնական բարենորոգում-
ներուն աւստրո-ուսական ծրագիրը
Դրան յանձնուեցաւ և ընդունուեցաւ
Սուլթանէն առանց ո և է առարկու-
թեան: Այս ծրագրին համաձայն, պի-
տի անուանուի Ընդհանուր Քննիչ մը
— հասկցիր Ընդհանուր Կառավարիչ
մը — որուն իշխանութիւնը պիտի ըլ-
լայ ընդարձակ ու անկախ: Ոստիկա-
նութեան սպաները պիտի կազմուին
տարամերթօրէն և արդարացիներէ, իսկ
օստիկանները քրիստոնեաներէ: Ծրա-
գիրը կը պարունակէ նաև դատական
բարոք վարչութեան ու տուրքերու

հաւաքման ու բաշխման եղանակին
վերաբերեալ շատ մը բարենորոգում-
ներ:

Աւստրիան ու Ռուսիան ազդարա-
րած են վերջերս պալգանեան փոքր-
տէրութեանց — ի մասնաւորի Պուլկա-
րիոյ իշխանապետութեան — թէ՛ ի-
րենք պէտք չէ՛ սպասեն Ռուսիայէն
ո՛չ ալ Աւստրիայէն աջակցութիւն կամ
նեցուկ, եթէ Մակեդոնիոյ մէջ ընդհ.
ապստամբութիւնը պայթի յեղափոխա-
կան գոմիթէներուն կողմէն ու իրենց-
մէ — փոքրիկ տէրութիւններէն —
մէկը կամ միւսը կուրի բռնուի Թուր-
քիոյ հետ:

Ծրագրին մէջ ո՛չ մի տօղ յիշ-
ուած է «Մակեդոնիա» բառը. այլ ըս-
ուած է «երեք վիշալէթներուն բնակ-
չութիւնները, ևն»:

— Հայ Հնարիչ մը. Վանայ Այ-
գեստանէն Տիար Փիլիպպոս Գեորգ-
եան, անցեալները կիզէի խտիվական
երկրագործական Ընկերութեան Ցու-
ցահանդէսին մէջ իր ցուցադրած Ապա-
նովոթեան կղզաւեցիին համար մրցա-
նակ առաւ նոյն ընկերութեան կող-
մէն: Հանճարեղ վասպուրականցին, 12
տարեկանէն ի վեր պանդխտած ու այս-
օր 45 տարու քաջակազմ ու միջահա-
սակ մարդ մըն է, արհեստով խոհա-
րար թէև, հնարիչ սակայն ուրիշ շատ
մը գիւտերու, որոնցմէ, գժբազդաբար
չէ՛ կրցեր մինչև ցարդ օգտուել, զուրկ
ըլլալով նիւթական միջոցներէն, որոնք
յաջողութեան էական պայմանները կը
կազմեն: Եթէ հայ հնարիչը գտնուէր
աւելի նպաստաւոր պայմաններու մէջ
ու քաջալերութիւն գտած ըլլար ո՛ր և
է դրամատիրոջ մը կողմէն, այսօր պի-
տի կազմած ըլլար իր ցեղին փառքե-
րեն մին, շնորհիւ իր մէկէ աւելի գիւ-
տերուն, որոնք մեծամեծ օգուտներ
պիտի կրնան ընծայել մարդկային ըն-
կերութեան:

Ահա՛ հայեցի հանճար մը, որ հա-

լածանքի ու ճնշումի տակ կը ծնի, և պահպանութեան ու զրկումի մէջ կը զարգանայ: Ու այսօր, չունենալով յաջողելու և շահագործելու միջոցներ, ստիպուած է ծախել իր գիւտերէն մին, և ձեռք բերել գրամագլուխ մը, որ պէս զի կարենայ աւելի՛ գիւրին պայմաններու մէջ շարունակել իր հնարագէտի գործունէութիւնը:

Հայ հնարիչը ձեռագործ հիւսուածներ ալ ունի, որոնք նպատակ ունի ցուցադրել Պերլին առաջիկայ ամառը բացուելիք հայկական ցուցահանդէսին մէջ:


Մեր խնդակցութիւնները յայտնելէ ետք, պարտք կը զգանք հրաւիրել ուշագրութիւնը մեր մասուլի եղբայրակիցներուն, եւ խնդրել որ Տիար Փիլիպպոս Մարգիտեանի հնարած Ապսիդոկոթեան կղպանքը իրիկ գեղեցիկ ու յգտակար գիւտ մը, փութան յանձնարարել իրենց թերթերուն միջոցաւ:

ՊԱՏՐԱՍ Է ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԼԵՒՈՆ ՎԵՐՁԻՆ

ԼՈՒՍԻՆԵԱՆ ԹԱԳԱՒՈՐ ՀԱՅՈՑ

Ընդարձակ եւ պահպանագարդ երկասիրութիւնը Կ. Յ. Բասմաճեանի:



Բովանդակութիւնն է. — Լեւոնին ծնողքը, ծնունդը, թագաւորութիւնը, գերութիւնը, ազատութիւնը, Սպանիայի մէջ թագաւորելը, Պարիս հաստատուիլը, Լոնդոն երթալը, կրկին Պարիս դառնալը, մահը, թաղումը, կտակը, շիրիմը, գերեզմանին աւրուելը, ոսկորներուն փոխադրութիւնը, նոր գերեզմանը, եւն. եւն.

Այս բոլորը մանրամասն կերպով նկարագրուած պիտի տեսնէ ընթերցողը՝ Լեւոնին իսկական ստորագրութիւնն ու կնիքը

կրող վաւերագրերու ընկերակցութեամբ եւ Լատին, սպանիացի, ֆրանսացի, անգլիացի եւ հայ պատմիչներու վիպութիւններով:

Գինը կորոշուի տպագրութենէն յետոյ միայն:

Տպագրութեան ծախքերը հոպացող բերար մը կը խնդրուի:

ՔԱՅՈՐԱԾ Է

1903 ՏԱՐԻՈՅ ԲՍԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԲԱՆԱՍԷՐ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

ԱՄՍԱԹԵՐԹԻ

Ա. «Բանասէր» կը հրատարակէ ազգային յառաջդիմութեան վերաբերեալ խորագրական տեսութիւններ:

Բ. Բանասիրական յօդուածներ՝ ազգային պատմութեան եւ մատենագրութեան վերաբերեալ:

Գ. Օտարազգի նշանաւոր հանձարնէրու գրուածոց թարգմանութիւններ:

Դ. Հայ աշխարհագրական եւ ազգագրական յօդուածներ:

Ե. Նոր հրատարակուած գրքերու վերայ քննադատական տեղեկութիւններ:

Զ. Լեզուաբանական եւ տուգաբանական յօդուածներ:

Է. Ազգային լրագրութեան մէջ տեսնուած կարեւոր յօդուածներու վրայ դիտողութիւններ:

Ը. Գիտական նորութիւններ:

Բաժանորդագինն է՝ տարեկան 15 ֆր. 6 բուբլի — 3 դոլար:

Կը խնդրենք խոնարհաբար մեր պատուական պաշտօնակիցներէն՝ որ բարեհաճին իրենց թերթին մէջ հրատարակել մեր ներկայ ծանուցումը եւ փոխանակել թերթերը:

Մեր հասցեն է՝ BASMADJIAN

112, Bd. ROCHECHOUART.

PARIS (18)

Ա Չ Դ Ե Ր

Անգլիերէնի մասնաւոր դասեր աւանդողը— որուն ծանուցումը ժամանակէ մ'ի վեր կը հրատարակուի Փիւնիկի մէջ — կը շարունակէ իր դասախօսութիւնները Պէռլիմի մէթոտով. հիմայ ունի բաւական թիւով աշակերտներ. կը խոստանայ շարաթը միայն 4 անգամ դաս առնողին սովորեցընել 5-6 ամսուան մէջ գրել, կարգալ ու խօսիլ:

Մանրամասնութեանց ու պայմաններուն համար դիմել Փիւնիկի խմբագրութեան:

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՃԱՇԱՐԱՆ

Մէնչիյէյի հրապարակը, Բասափ Բրէնս Սէյֆէտտին պէյ, թիւ 50 խօսութիւն:

Ամեն տեսակ արեւելեան կերակուրներ, և անուշեղէններ, մասնաւորաբար Տեօնէր եւ Շիշֆեպայի:

Այս ճաշարանի վարիչներն են Տեարք Կարապետ Տիրհէմէեան և Սարգիս Հիւսէյինեան

Բաժանորդագրութիւն կ'ընդունուի դիւրամատչելի պայմաններով, կանխիկ վճարումով: Գիներուն չափաւորութեամբը կրնայ մրցիլ օտարներու նման հաստատութեանց հետ:

Մինչև ցարդ հոն յաճախող պատազդայիններուն հետզհետէ աճող թիւը պերճախօս վկայութիւն մ'է արդէն սոյն ճաշարանին մէկէ աւելի առաւելութեանցը:

Յաճախեցէ՛ք Արեւելեան ճաշարանը:

ԱՐՄԵՆԻԱ ԼԻՆՉԻ

Անգլիերէն հոյակապ երկին կարևոր մասերուն ամփոփումը, հայերէնի թարգմանուած, գեղեցիկ հատոր մը, 157 էջերով, հեղինակին պատկերով ու ինքնակենսագրութեամբ: Գրեց Պ. Տօնայեճեան: Գինն է 3 Քրանգ.

Դիմել.

Mr. Donabedian

177 Godolphin Road

Shepherd's Bush

London.W.

ՏՐ . ՍԱՐԳԻՍ Բ. ԺԱՄԿՈՉԵԱՆ

Ամերիկեան վկայեալ բժիշկ

Սեսուսրիս փողոց թիւ 1

«Ճար ս'Աշէֆաւնսրի»ի սպարանին վրայ ի.Ա. յարկը

Տողթէօր Սարգիս Բ. Ժամկոչեան պատիւ ունի ծանուցանել Տեղիս արդոյ հասարակութեան թէ՛ ինք հաստատուած է վերջնապէս քաղաքիս մէջ ու պատրաստ է դարմանելու ընդհանուր հիւանդութիւններ: Մասնագիտօրէն ու Ամերիկայի կատարելագործուած ու նորագոյն բժշկական փորձերով ու սխաղէմով կը բուժէ մանաւանդ արեան վերաբերեալ զանազան ախտերը:

Հիւանդները կ'ընդունի ամեն օր կէս օրէն ետքը ժամը 2-5. Իսկ Չորեքշաբթի և Շաբաթ օրերը առտուան ժամը 9-11 ձրիաբար կը դարմանէ իրեն գիժող ազգաւ հիւանդները: